



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9231/05/24
Նախագահող դատավոր՝ Ս. Հովակիմյան

Վարչական գործ թիվ ՎԴ/9231/05/24
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի հունիսի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով երրորդ անձ Սերինե Հայրապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.10.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու ընդդեմ Արտաշատ համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, Սերինե Հայրապետյան՝ Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը վերացնելու և որպես հետևանք՝ 25.10.2004 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրը և Սերինե Հայրապետյանի անվամբ տրված թիվ 0078284 վարձակալության պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին պահանջել է վերացնել Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 25.10.2004 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրը և Սերինե Հայրապետյանի անվամբ տրված թիվ 0078284 վարձակալության

պետական գրանցումը: Միաժամանակ հայցվորը միջնորդել է վերականգնել հայց ներկայացնելու դատավարական ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 09.08.2024 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ և հրավիրվել է նախնական դատական նիստ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.10.2024 թվականի որոշմամբ երրորդ անձ Սերինե Հայրապետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.08.2024 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, վարչական գործը բանավոր ընթացակարգով քննելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել երրորդ անձ Սերինե Հայրապետյանը (ներկայացուցիչ՝ Յուրի Շիրինյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 72-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզառաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորը՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին, ՀՀ գլխավոր դատախազությունից չի ստացել որևէ առաջարկ Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը ՀՀ վարչական դատարանում վիճարկելու վերաբերյալ, հետևաբար՝ հայցվորը որևէ հիմք չունեւր Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը երկամսյա ժամկետում չվիճարկելու դատավարական ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու համար: Տվյալ դեպքում ՀՀ գլխավոր դատախազությունից Արտաշատ համայնքի ղեկավարին է ներկայացվել առաջարկ, որը վերաբերել է ոչ թե Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը ՀՀ վարչական դատարանում վիճարկելուն, այլ՝ նշված որոշման հիմքով երրորդ անձի հետ կնքված վարձակալության պայմանագիրը միակողմանիորեն լուծելուն:

Չունենալով համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը ՀՀ վարչական դատարանում վիճարկելու վերաբերյալ դատախազության կողմից համայնքի ավագանուն ուղղված առաջարկություն՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին որոշում է կայացրել համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը ՀՀ վարչական դատարանում վիճարկելու վերաբերյալ, որպիսի պարագայում համայնքի ավագանու համար չէր կարող առաջանալ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա դատավարական ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու հիմք:

Այսպիսով՝ սույն գործով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին ՀՀ գլխավոր դատախազությունից չի ստացել Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշման վիճարկման վերաբերյալ հայց ներկայացնելու առաջարկություն, հետևաբար՝ սույն գործով հայցվորի համար չի ծագել ներկայացված հայցով բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու հիմքը, իսկ հայցվորի ներկայացրած հիմնավորումը, որը վերաբերում է համայնքի ղեկավարի կողմից ստացված առաջարկը՝ որպես հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկման սկիզբ դիտարկելուն, անհիմն է, ուստի բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա էր մերժման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 21.10.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 09.08.2024 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, վարչական գործը բանավոր ընթացակարգով քննելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին» որոշումը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասով:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 72-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված վիճարկման հայց հարուցելու իրավունքի ծագման պահը որոշելու համարեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանու կողմից վիճարկելու դատավարական ժամկետները հաշվարկելու իրավական հնարավորությանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և

պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը *(տե՛ս, Նարինե Չարչյանը, Վահե և Աննա Տեր-Եսայաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/11139/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.09.2021 թվականի որոշումը)*:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ *(տե՛ս, Կարինե Զիլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կամ պաշտոնատար անձանց ևս իրավունք է վերապահել հայց հարուցել ՀՀ վարչական դատարան ընդդեմ վարչական մարմնի այն դեպքում, երբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք համարում են, որ պատասխանող վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով պետության իրավունքները խախտող վարչական ակտը վիճարկելու իրավունք վերապահելով այն պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց, որոնց վրա դրված է այդ իրավունքների պաշտպանության լիազորությունը, միաժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով չի սահմանել այն ժամկետները, որոնց ընթացքում նշված սուբյեկտները կարող են դիմել ՀՀ վարչական դատարան *(տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2021 թվականի որոշումը)*:

ՀՀ սահմանադրական դատարանը 05.08.2021 թվականի թիվ ՍԴԱՌ-175 որոշմամբ մերժել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.07.2021 թվականի ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու մասին որոշման հիմքով հարուցված գործի քննությունը՝ այն պատճառաբանությամբ, որ օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությունը ՀՀ սահմանադրական դատարանում քննության առարկա դարձնելու հնարավորության հարցն առաջանում է այն դեպքում, երբ արձանագրվում է օրենսդրական բացի առկայությունը: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը **վիճարկման հայց ներկայացնելու ժամկետ է սահմանում ոչ միայն վարչական վարույթի մասնակիցների, այլև՝ դրա մասնակից չհանդիսացած անձանց, այդ թվում՝ նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված սուբյեկտների համար**: Վերոնշյալից հետևում է, որ տվյալ դեպքում առկա է վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի վերաբերյալ օրենսդրական կարգավորում, որի հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հնարավորություն ունի գնահատելու կոնկրետ դեպքում նշված ժամկետի բացթողնման պատճառները հարգելի համարելու և այն վերականգնելու հարցի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությունը, որպիսի լիազորությունների իրականացումն էլ բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական առաքելության իրացման տիրույթում է:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.04.2014 թվականի թիվ ՍԴՌ-1143 որոշմամբ նշել է. *«(...) Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող փարրի բացակայության կամ այդ փարրի թերի կանոնակարգման*

հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Իր մեկ այլ՝ 05.02.2010 թվականի թիվ ՍԴՈ-864 որոշմամբ, իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: ՀՀ սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Զարգացնելով հիշատակված իրավական դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: (...) օրենսդրական բացը կարող է հանդիսանալ ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ ՀՀ սահմանադրական դատարանի քննությանը»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրելով, որ օրենսդրության մեջ առկա չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետային սահմանափակում, եզրահանգել է, որ որպես այդ բացը լրացնելու իրավական երաշխիք կարող է հանդիսանալ գործող իրավակարգավորումների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած ներքոհիշյալ իրավական դիրքորոշումը: Այսպես.

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Սույն դրույթով ամրագրված սեփականության տարբեր ձևերի հավասարաչափ ճանաչման և պաշտպանության սահմանադրական սկզբունքին համապատասխան, պետությունը պարտավոր է ապահովել հավասար պաշտպանության հնարավորություն բոլոր

սեփականատերերի համար, հետևաբար պետական սեփականությունը սեփականության այլ ձևերի համեմատությամբ չի կարող ունենալ իրավական պաշտպանության ոչ մի առավելություն: Սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության սահմանադրական սկզբունքը տարածվում է ոչ միայն սեփականության պաշտպանության ձևերի և եղանակների սահմանման, այլ նաև շահագրգիռ անձանց կողմից համապատասխան իրավունքների պաշտպանության պայմանների օրենսդրական ամրագրման վրա:

Սեփականատիրոջը տրամադրվող իրավական պաշտպանության պայմաններից մեկը նրա կողմից իրավունքի պաշտպանության պահանջ ներկայացնելն է՝ օրենքով սահմանված նյութական և դատավարական ժամկետի սահմաններում: Հետևաբար, իրավունքների պաշտպանության ժամկետներ սահմանելիս օրենսդիրը նույնպես պետք է ելնի սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության սահմանադրական սկզբունքից:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ նյութական և դատավարական ժամկետների նախատեսման նպատակն է ինչպես հանրային գործառույթների իրականացման արդյունավետության ապահովումը, այնպես էլ՝ համապատասխան իրավական հարաբերությունների անհրաժեշտ կանխատեսելիության հուսալիության ու կայունության պահպանումը (տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2021 թվականի որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նշել է, որ պետությունը կարող է իրականացնել հանրային գործառույթներ մասնավոր իրավական ոլորտում, սակայն պետական կառույցին պատկանելու փաստն ինքնին չի արդարացնում պետությանն արտոնությունների տրամադրումը հայցային վաղեմության ժամկետների կապակցությամբ: Ընդ որում՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետության շահագրգռվածությունն իր հանդեպ ունեցած պարտքի բռնազանձման հարցում կամ բյուջեի վրա չնախատեսված ծանրաբեռնվածությունը բացառելու անհրաժեշտությունն ինքնին չեն կարող դիտարկվել որպես հանրային կամ ընդհանուր շահ, որն արդարացնում է անհատական իրավունքներին միջամտությունը՝ պետության պահանջների նկատմամբ հայցային վաղեմության չափազանց երկար ժամկետ սահմանելու միջոցով:

Արդյունքում՝ Եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ պետության կողմից արտոնությունների տրամադրումը մասնավոր անձանց պահանջների համեմատ՝ օրենսդրությամբ հայցային վաղեմության ավելի երկար ժամկետներ ամրագրելու տեսքով, խախտում է վերջիններիս գույքային իրավունքները, ինչպես նաև արդար հավասարակշռությունը, որը պետք է սահմանվի գույքային իրավունքների պաշտպանության և հանրային շահի պահանջների միջև:

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ հայցային վաղեմության ժամկետի նման ամրագրումը օրենսդրության մեջ ոչ միայն նյութաիրավական, այլև դատավարական ասպեկտ ունի, քանի որ պետությանը տրվում է արտոնություն դատական քննության ժամանակ, որը մասնավոր անձանց համեմատ դնում է ավելի բարենպաստ դրության մեջ: Արդյունքում խախտվում է կողմերի դատավարական հնարավորությունների հավասարության սկզբունքը, ինչպես նաև դատարանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված իրենց իրավունքների դատական պաշտպանության մասնավոր անձանց

երաշխիքները (*տե՛ս, Zouboulidis v. Greece գործով Եվրոպական դատարանի 25.06.2009 թվականի վճիռը, Varnima Corporation International S.A. v. Greece գործով Եվրոպական դատարանի 28.05.2009 թվականի վճիռը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում արձանագրել է, որ Եվրոպական դատարանը հայցային վաղեմության ժամկետները դիտարկում է ոչ միայն նյութաիրավական, այլև դատավարական առումներով: Մասնավորապես, դատավարական առումով հայցային վաղեմության ժամկետը համարժեք է դատարան դիմելու համար նախատեսված ժամկետային սահմանափակումներին, հետևաբար Եվրոպական դատարանի՝ վկայակոչված դիրքորոշումը հավասարապես կիրառելի է ինչպես նյութական օրենսդրությամբ սահմանված՝ հայցային վաղեմության ժամկետների կապակցությամբ, այնպես էլ՝ դատավարական օրենսդրությամբ նախատեսված՝ դատարան դիմելու ժամկետային սահմանափակումների նկատմամբ: Վերոգրյալի հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ անգամ հանրային շահի պաշտպանության պարագայում նման ժամկետների սահմանումն իրավական պետության կարևոր նախադրյալ է հանդիսանում, քանի որ ապահովում է հանրային և մասնավոր շահերի հավասակշռումը (*տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2021 թվականի որոշումը*):

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն (...) իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իր բազմաթիվ որոշումներում (թիվ ՍԴՈ-630, թիվ ՍԴՈ-731, թիվ ՍԴՈ-753, թիվ ՍԴՈ-984, թիվ ՍԴՈ-1142, թիվ ՍԴՈ-1176, թիվ ՍԴՈ-1213, թիվ ՍԴՈ-1270 և այլն) ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով մասնավորապես՝

- «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (թիվ ՍԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը:

նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (թիվ ՍԴՈ-753),

- «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (թիվ ՍԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (թիվ ՍԴՈ-1213):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանադրական վերոգրյալ սկզբունքները համընդհանուր և հիմնարար սկզբունքներ են, որոնց ուժով, ի թիվս այլնի, պետք է ապահովվեն նաև հավասար պայմաններ դատարան դիմող յուրաքանչյուր սուբյեկտի համար: Մասնավորապես, դատարան դիմելու համար օրենսդրական կարգավորումները, այդ թվում նաև՝ ժամկետային սահմանափակումները, պետք է հավասարապես կիրառելի լինեն յուրաքանչյուրի նկատմամբ՝ անկախ նրանց կարգավիճակից: Այլ կերպ ասած՝ անկախ հայցվորի՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ վարչական մարմին լինելու հանգամանքից, վերջիններիս համար պետք է ապահովվեն միևնույն պայմանները, և որևէ սուբյեկտ չի կարող ունենալ դատարան դիմելու առավել բարենպաստ կամ արտոնյալ պայմաններ, քան մյուսները: Միևնույն ժամանակ դատարան դիմելու համար օրենսդրական կարգավորումները պետք է բավարար չափով որոշակի լինեն, որպեսզի հիմնական իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված չլինելու հետևանքով վերջիններս ձեռք են բերում դատարան դիմելու առավել բարենպաստ պայմաններ, քան ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և հնարավորություն են ստանում վիճարկման հայցը դատարան ներկայացնել առանց ժամկետային սահմանափակման: Հետևաբար անձանց գույքային շահերին առնչվող վարչական ակտերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա բողոքարկելու հնարավորությունը ժամկետային սահմանափակման չենթարկելու պարագայում նրանց համար ստեղծվում է իրավական անորոշություն: Որպես հետևանք խախտվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքները: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված կարգավորման մեջ անհրաժեշտ է հանրային և մասնավոր շահերի՝ որպես սահմանադրորեն պաշտպանվող արժեքների, արդարացի հավասարակշռության հաստատում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 01.01.2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատություն ներդնելու նպատակը եղել է մի կողմից

պետական (վարչական մարմինների), մյուս կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև գոյություն ունեցող իրական անհավասարությունը վերացնելը, վերջիններիս դիրքը պետության (վարչական մարմինների) համեմատ ուժեղացնելը և դրանով իսկ առկա ուժային տարբերությունը նվազեցնելը հոգուտ քաղաքացու: Այլ կերպ ասած՝ վարչական արդարադատությունը միտված է վարչաիրավական հարաբերությունն իրավական պետության ոգով ձևավորելուն, այդ թվում՝ վարչական մարմնի և քաղաքացու միջև հավասարակշռություն ապահովելուն:

Վարչական վարույթը կարգավորող իրավունքը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը և վարչական դատավարական իրավունքը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը իրավական պետության այնպիսի նվաճումներ են, որոնք երաշխավորում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը վարչական մարմինների վարչական ակտերից, գործողություններից և անգործությունից: Այդ երկու օրենքները պետք է թույլ չտան, որ վարչական մարմինը հիշատակված ուժային տարբերության պատճառով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերվի որպես լոկ օբյեկտի և հաշվի չառնի նրանց օրինական շահերը:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթը, վարչական դատարանը և վարչական դատավարական իրավունքը իրավական ինստիտուտներ են, որոնք հատկապես սերտորեն են կապված իրավական պետության սկզբունքի հետ՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի իմաստով: Նրանք հարաբերական են դարձնում կառավարության (գործադիր իշխանության) և քաղաքացու միջև անխուսափելի կառուցվածքային ուժային տարբերությունը՝ ընթացակարգային իրավունքներով տևականորեն ուժեղացնելով քաղաքացու իրավական կարգավիճակը:

Վերոգրյալի հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտները չեն կարող ունենալ դատարան դիմելու առավել բարենպաստ պայմաններ, քան մյուսները, հետևաբար նրանց համար ևս պետք է ապահովվեն միևնույն պայմանները, ինչը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի այլ մասերում նշված սուբյեկտների համար:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտներին վերապահելով պետության իրավունքները խախտող վարչական ակտը վիճարկելու իրավունք, միևնույն ժամանակ, սակայն, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածով չի սահմանել նշված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարությունում վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև հավասարակշռությունն ապահովելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից վիճարկման հայց ներկայացնելու դատավարական ժամկետի հաշվարկման համար պետք է հիմք ընդունվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումը՝ այն մեկնաբանմամբ, որ նշված իրավանորմում օգտագործված «վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից» եզրույթը ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների համար պետք է դիտարկվի որպես վիճարկվող վարչական ակտի մասին վերջիններիս կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվելու պահ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված սուբյեկտների կողմից ընդդեմ վարչական մարմինների վիճարկման հայցը կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ այն պահից սկսած, երբ հայցվոր վարչական մարմինն իր լիազորությունների իրականացման ընթացքում իրազեկվել է վարչական ակտի գոյության մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վերագրյալ մեկնաբանմամբ կիրառելը ոչ միայն բխում է իրավական պետության, իրավական որոշակիության, սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության սահմանադրական հիմնարար սկզբունքներից՝ երաշխավորելով իրավական անվտանգությունը, այլ նաև ապահովում է հավասար պայմաններ դատարան դիմող յուրաքանչյուր սուբյեկտի համար՝ անկախ նրանց կարգավիճակից:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը (*տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2021 թվականի որոշումը*):

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարությունում բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնելու ինստիտուտը նպատակ է հետապնդում ապահովելու դատական պաշտպանություն հայցած անձի կողմից իր դատավարական իրավունքներն իրացնելու հնարավորությունը՝ այն դեպքում, երբ վերջինս օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չի կարողացել պահպանել սահմանված դատավարական ժամկետները:

Միևնույն ժամանակ, սակայն, դատավարական ժամկետների հարցը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ կարևորվում և առաջնային է դառնում այն պարագայում միայն, երբ հաստատվում է դատական պաշտպանություն հայցող սուբյեկտի դատարան դիմելու իրավունքը ծագած լինելու հանգամանքը, քանի որ այդ իրավունքը ծագած չլինելու

պայմաններում առհասարակ խոսք չի կարող լինել որևէ դատավարական ժամկետի, առավել ևս այդ ժամկետի հոսքի սկիզբը որոշելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս: Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին: Այնուհետև **դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո** համապատասխան մարմնի կողմից ողջամիտ ժամկետում հայց չներկայացնելու, այլ կերպ ասած՝ անգործություն դրսևորելու պարագայում միայն դատախազը ձեռք է բերում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նաև համայնքի ղեկավարի որոշումների կապակցությամբ դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերին, արձանագրել է, որ երբ դատախազն իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերել է համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ, **պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն**, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը: Եթե դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո համայնքի ավագանին ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել դատարան, ապա միայն այդ պայմաններում է դատախազությունը ձեռք բերում համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավունք (*տե՛ս, ՀՀ Կոտայքի մարզի դատախազությունն ընդդեմ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի թիվ ՎԴ2/0250/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.05.2024 թվականի որոշումը*):

Այսպիսով, զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս, ուստի նախևառաջ այդ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին է կրում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու պարտականությունը: Նշված պարտականությունը, սակայն, վերջինս կողմից չկատարվելու դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է լրացուցիչ միջոց, ըստ որի՝ դատախազի կողմից համայնքի ավագանուն է ուղղվում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն, որպիսի փաստի ուժով էլ համայնքի ավագանու մոտ ծագում է հայց հարուցելու իրավունք: Այլ կերպ ասած, եթե համայնքի ավագանին ինքնուրույն, իր լիազորությունների իրականացման ընթացքում չի հայտնաբերում համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտով համայնքային շահերի

խախտման փաստ և նշված խախտման փաստը հայտնաբերելու, այսինքն՝ համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտի մասին իրազեկվելու պահից սահմանված ժամկետում սեփական նախաձեռնությամբ չի հարուցում այդ խախտումը վերացնելու և համայնքի խախտված իրավունքները վերականգնելու հայց, ապա համայնքի ավագանու մոտ հայց հարուցելու իրավունքի ծագման հիմք է հանդիսանում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու համայնքի ավագանուն ուղղված դատախազի առաջարկությունը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ համայնքի ավագանին ինքնուրույն, իր լիազորությունների իրականացման ընթացքում չի հայտնաբերել համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտով համայնքային շահերի խախտման փաստ և այդ խախտումը վերացնելու և համայնքի խախտված իրավունքները վերականգնելու հայց սեփական նախաձեռնությամբ չի հարուցել, իսկ հայց հարուցելու իր իրավասությունն իրացնելու հիմքում դրել է **հայց ներկայացնելու վերաբերյալ դատախազության առաջարկությունը**, ապա համայնքի ավագանու՝ դատարան դիմելու իրավունքը կարող է համարվել ծագած բացառապես պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու դատախազության առաջարկը ստանալու փաստի ուժով, և նշված փաստն ապացուցվելու պարագայում միայն անհրաժեշտություն կառաջանա քննարկելու դատավարական ժամկետների հարցը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշման համաձայն հաստատվել է Արտաշատի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի 09.03.2004 թվականի թիվ 11 որոշումը և Արտաշատ քաղաքի Երևան-Երասխ մայրուղուն հարակից տարածքում, հիվանդանոցի դիմաց գտնվող 3000քմ հողատարածքը (ըստ տրվող սխեմայի) մեծածախ շինանյութերի առևտրի կենտրոն կառուցելու նպատակով հատկացվել է Արտաշատ քաղաքի Հր. Թովմասյան փողոցի թիվ 7/21 բնակարանի բնակչուհի Սերինե Հայրապետյանին (**գ.թ. 20**):

Արտաշատ համայնքի ղեկավար Գ. Մուրադյանի և Սերինե Հայրապետյանի միջև 25.10.2008 թվականին կնքվել է հողի վարձակալության պայմանագիր, ըստ որի՝ Սերինե Հայրապետյանի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնվել Արտաշատ համայնքում գտնվող 3000քմ հողամասը, որպիսի իրավունքը գրանցվել է թիվ 0078284 վկայականով (**գ.թ. 23-25**):

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից Արտաշատ համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանին ուղղված 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրությամբ նշվել է, որ. «ՀՀ քննչական կոմիտեի հափուկ հանձնարարություններով գործերի քննության վարչությունում Արտաշատ համայնքի նախկին ղեկավար Գագիկ Մուրադյանի վերաբերյալ իրականացվող թիվ 27200920 քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2004 թվականի հոկտեմբերի 25-ին Արտաշատ համայնքի և Գագիկ Մուրադյանի կնոջ՝ Սերինե Հայրապետյանի միջև կնքվել է հողի վարձակալության պայմանագիր:

Հիշյալ պայմանագրի համաձայն՝ Սերինե Հայրապետյանը վարձակալել է Արտաշատ քաղաքի՝ Երևան-Երասխա մայրուղու հարակից տարածքում, Արտաշատի հիվանդանոցի հարևանությամբ գտնվող, թիվ 03-001-0041-0045 կադաստրային ծածկագրով 3000քմ մակերեսով հողատարածքը՝ շինանյութի մեծածախ առևտրի կենտրոն կառուցելու նպատակով:

Նույն պայմանագրով հողատարածքի տարեկան վարձավճար է սահմանվել 88.200 ՀՀ դրամը:

Նախաքննության ընթացքում Արտաշատի համայնքապետարանի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրամադրված տեղեկությունների համաձայն՝ վերոհիշյալ հողատարածքի վարձակալության վճարը 2012-2019թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել, իսկ նախորդ ժամանակահատվածների վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

2004 թվականի հոկտեմբերի 25-ին համայնքապետարանի և Սերինե Հայրապետյանի միջև կնքված հողի վարձակալության հիշյալ պայմանագրի 5-րդ բաժնի 20-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձատրի կողմից եթե՝

20.1-ին կետ՝ վարձակալը երեք ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը:

20.2-րդ կետ՝ վարձակալի հողմասն օգտագործվում է ոչ նպատակային:

Բացի այդ, Արտաշատի քաղաքապետի՝ 2004 թվականի մարտի 25-ի թիվ 79 որոշմամբ հաստատվել է Արտաշատի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի՝ 2004 թվականի մարտի 9-ի թիվ 11 որոշումը, որով նախատեսվել է 3000քմ հողատարածքը Սերինե Հայրապետյանին հատկացնել մեծածախ շինությունների՝ առևտրի կենտրոն կառուցելու նպատակով:

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ նշված պայմանները չկատարելու, հատկացված հողատարածքը երկու տարվա ընթացքում նպատակային չօգտագործելու դեպքում որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոգրյալից հետևում է, որ 2004 թվականի հոկտեմբերի 25-ին համայնքապետարանի և Սերինե Հայրապետյանի միջև կնքված հողի վարձակալության պայմանագրով նախատեսված են վարձատրի կողմից այն միակողմանի վաղաժամկետ լուծելու հստակ կարգավորումներ, որոնց կիրառման համար առկա են բավարար հիմքեր, հետևաբար՝ խնդրում եմ քննարկել նշված պայմանագիրը միակողմանի լուծելու և համայնքի օրինական շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հարցը:

Արդյունքների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազությանը» (գ.թ. 17):

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրությունը Արտաշատի համայնքապետարանում մուտքագրվել է 21.06.2024 թվականին (գ.թ. 17):

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին 01.08.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել **ընդդեմ Արտաշատ համայնքի ղեկավարի՝** Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը վերացնելու և որպես հետևանք՝ 25.10.2004 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրը և Սերինե Հայրապետյանի անվամբ տրված 0078284 վարձակալության պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Միաժամանակ **հայցվոր ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին** ներկայացրել է բաց թողնված դատավարական ժամկետը

¹ Սույն գործով վիճարկվող որոշմամբ նշված է «մեծածախ շինանյութերի», այլ ոչ թե «մեծածախ շինությունների»

վերականգնելու վերաբերյալ միջնորդություն այն հիմնավորմամբ, որ «**համայնքի ղեկավարը** դատախազության գրությունը ստացել է 21.06.2024թ»:

Դատարանը 09.08.2024 թվականի որոշմամբ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ **համայնքի ավագանու** կողմից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել է և հայցադիմումն ընդունել է վարույթ՝ նշելով հետևյալը. «(...) հայցվորը, ներկայացնելով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, հիմքում դրել է այն հանգամանքը, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից Արտաշատի քաղաքապետի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշման վիճարկման և դրա հիման վրա կնքված վարձակալության պայմանագրի վիճարկման միջոցով համայնքի օրինական շահերը պաշտպանելու առաջարկը ստացվել է 21.06.2024 թվականին: Միաժամանակ, հայցվորը հղում է կատարել թիվ ՎԴ/0250/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.05.2024 թվականին կայացրած որոշմանը, որով արձանագրվել է, որ «...դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է ողջամիտ ժամկետով, որը տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի համապատասխան հայցարեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով: Ընդ որում, տվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով: (...)»:

Ուսումնասիրելով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և կից ներկայացված ապացույցները՝ դատարանի գնահատմամբ դրանք բավարար են հայցվորի կողմից դատավարական ժամկետների բացթողումը հարգելի համարելու և վերականգնելու համար»:

Վերաքննիչ դատարանը 21.10.2024 թվականի որոշմամբ, մերժելով երրորդ անձ Սերինե Հայրապետյանի վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները՝ միաժամանակ արձանագրելով, որ «(...) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Պողոսյանը 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրությամբ (Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմում մուտքագրվել է 21.06.2024 թվականին (գ.թ. 17)) Արտաշատ համայնքի ղեկավարին հայտնել է, որ 2004 թվականի հոկտեմբերի 25-ին համայնքապետարանի և Սերինե Հայրապետյանի միջև կնքված հողի վարձակալության պայմանագրով նախատեսված են վարձատրուի կողմից այն միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու հստակ կարգավորումներ, որոնց կիրառման համար առկա են բավարար հիմքեր, հետևաբար խնդրել է քննարկել նշված պայմանագիրը միակողմանի լուծելու և համայնքի օրինական շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հարցը:

Այսպիսով, (...) Հայցվորի կողմից բերված փաստարկը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու և վերականգնելու համար բավարար հիմք է հանդիսանում, քանի որ Արտաշատի քաղաքապետի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշման վիճարկման և դրա հիման վրա կնքված վարձակալության պայմանագրի վիճարկման միջոցով համայնքի օրինական շահերը պաշտպանելու առաջարկությունը Արարատի մարզի դատախազության կողմից ստացվել է 21.06.2024 թվականին, որից հետո Հայցվորը դատական պաշտպանության նպատակով

01.08.2024 թվականին փոստային ծառայության միջոցով դիմել է դատարան, այսինքն՝ Հայցվորը չի ցուցաբերել անգործություն և ձեռնարկել է միջոցներ՝ իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ:

Անդրադառնալով նաև Բողոքաբերի այն դիրքորոշմանը, որ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին ՀՀ գլխավոր դատախազությունից չի ստացել Արտաշատի քաղաքապետի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշման վիճարկման վերաբերյալ հայց ներկայացնելու առաջարկ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ համաձայն գործում առկա փաստաթղթերի՝ Հայցվորի կողմից դատարան է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Պողոսյանի 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրությունը՝ ուղղված Արտաշատ համայնքի ղեկավարին, ըստ որի՝ խնդրվել է քննարկել պայմանագիրը միակողմանի լուծելու և համայնքի օրինական շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հարցը: Արդյունքում՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին 01.08.2024 թվականին փոստային ծառայության միջոցով դատարան է ներկայացրել հայցադիմում՝ Արտաշատի քաղաքապետի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը վերացնելու և որպես հետևանք՝ 25.10.2004 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրը և Սերինե Հայրապետյանի անվամբ տրված 0078284 վարձակալության պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանը գալիս է այն համոզման, որ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին տեղեկանալով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից համայնքի ղեկավարին կատարված ըստ էության առաջարկության մասին, ողջամիտ ժամկետում դիմել է դատական պաշտպանության: Սույն դեպքում առաջարկությունը համայնքի ղեկավարին ուղղված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու համար»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չեն բխում սույն գործի փաստերից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը սույն գործով վիճարկում է **ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին**: Ընդ որում՝ վերջինս համայնքի ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտով համայնքային շահերի ենթադրյալ խախտման փաստը չի հայտնաբերել ինքնուրույն, իր լիազորությունների իրականացման ընթացքում և այդ խախտումը վերացնելու և համայնքի խախտված իրավունքները վերականգնելու հայցը չի հարուցել սեփական նախաձեռնությամբ, այլ հիմք է ընդունել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրությունը, որի հասցեատերը հանդիսանում է **ոչ թե ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին, այլ՝ Արտաշատ համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանը**:

Այսինքն՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու դատախազության առաջարկը ստանալու փաստի ուժով **ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու համար** չի ծագել և չէր կարող ծագել հայց հարուցելու իրավունքը, քանի որ, ինչպես վերը նշվեց, **ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին** պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու դատախազության առաջարկ

չի ստացել, հետևաբար բացակայել է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու դատախազության առաջարկը ստանալու փաստով պայմանավորված հայց հարուցելու դատավարական ժամկետի հոսքի սկիզբը որոշելու, ըստ այդմ նաև՝ այն բաց թողնված լինելը, բաց թողնման պատճառների հարգելիությունը գնահատելու հնարավորությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **Արտաշատ համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանին** ուղղված ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրությունը Արտաշատի համայնքապետարանում 21.06.2024 թվականին մուտքագրված լինելու հանգամանքը չի կարող համարվել պատշաճ և բավարար հիմք **ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու** կողմից Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը վիճարկելու կապակցությամբ 01.08.2024 թվականին դատարան հայց ներկայացնելու համար, որպիսի պարագայում դատավարական ժամկետի հարցին առհասարակ անդրադառնալու անհրաժեշտություն առկա չի եղել, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ **Արտաշատ համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանին** ուղղված ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրության բովանդակությունը վկայում է այն մասին, որ առաջարկի հասցեատերն իրականում հանդիսացել է ոչ թե **ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին, այլ՝ Արտաշատ համայնքի ղեկավարը**, որպես 25.10.2004 թվականի հողի վարձակալության պայմանագրի կողմ, ում առաջարկվել է միակողմանի վաղաժամկետ լուծել նշված պայմանագիրը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Արտաշատի համայնքապետարանի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրամադրված տեղեկությունների համաձայն՝ վերոհիշյալ հողատարածքի վարձակալության վճարը 2012-2019թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել, իսկ նախորդ ժամանակահատվածների վերաբերյալ տեղեկություններ առկա չեն: Այսինքն՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 18.06.2024 թվականի թիվ 36-366-21 գրության պահանջը վերաբերել է ոչ թե Արտաշատ համայնքի ղեկավարի 25.03.2004 թվականի թիվ 79 որոշումը վիճարկելուն, այլ՝ որպես քաղաքացիաիրավական պայմանագրի կողմի՝ Արտաշատ համայնքի կողմից այդ պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծելուն, ինչն իր բնույթով քաղաքացիաիրավական կարգավորման առարկա է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է գնահատում վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ ստորադաս դատարանների պատճառաբանությունները, քանի որ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին հայցը ներկայացրել է նախապես դատախազության կողմից համայնքի ղեկավարի որոշումների կապակցությամբ հայց ներկայացնելու համար սահմանված ընթացակարգի խախտմամբ: Մինչդեռ Դատարանը, անտեսելով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու մոտ հայց ներկայացնելու իրավունքի բացակայությունը, քննարկման առարկա է դարձրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին վերջինիս միջնորդությունը և բավարարել այն՝ կայացնելով ոչ իրավաչափ դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.10.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասով վերացնել ՀՀ վարչական դատարանի 09.08.2024 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու, վարչական գործը բանավոր ընթացակարգով քննելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ձեկնուցող _____ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

_____ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

_____ Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

_____ Ք. ՄԿՈՅԱՆ